ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

30 Նոյեմբերի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

171
(2837)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԳՆԴԱԿԸ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԻ ԴԱՇՏՈՒՄ Է



Իրավապահ համակարգում ներքին տարաձայնություն է ձեւավորվել ՔՊ-ական պատգամավոր Գագիկ Մելքոնյանի թոռան միջադեպով: Բանն այն է, որ իրավապահները մեկը մյուսի վրա են գցում ՔՊ-ական պատգամավոր Գագիկ Մելքոնյանի որդուն ժամանակին ձերբակալելու եւ իրավապահ մարմիններին ներկայացնելու հարցը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ մինչ իրավապահները ներքին կռիվ են տալիս, թե ով կամ ովքեր ժամանակին ընթացք չեն տվել դեպքին ու կասկածյալին չեն բերել հարցաքննության, փաստ է մեկ բան, որ պատգամավորի թոռը մինչ օրս հարցաքննված չէ: ArmLur.am-ը գրել էր, որ ներքին պայմանավորվածություն կա՝նրան առաջիկայում կբերեն հարցաքննության: Երեւանի իրավատնտեսագիտության եւ կառավարման քոլեջում դանակահարություն է տեղի ունեցել պատգամավոր Գագիկ Մելքոնյանի թոռան մասնակցությամբ: Մելքոնյանի թոռը, ըստ այդ աղբյուրի, դանակահարել է նույն համալսարանի մեկ այլ սանի: Ըստ «Ժողովուրդ» օրաթերթին հասած բացառիկ տեղեկությունների՝միջադեպի ականատեսներ կան, որոնք կցկտուր տեղեկություններ են հայտնել իրավապահներին, որ Գագիկ Կարենի Մելքոնյանն է վնասվածքը հասցրել այդ տղային: Իրավապահները արդյոք մինչեւ վերջ կգնան եւ կբացահայտեն գործը եւ պատասխանատվության կկանչեն ՔՊ-ական պատգամավորի թոռանը՝ցույց կտա ժամանակը: Փաստ է մեկ բան. մինչ այժմ Գագիկ Մելքոնյանի թոռանը չեն գտել: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ հարցաքննության ժամանակ տուժած ուսանողն իրավապահներին հայտնել է, թե ծառից է ընկել: Դեպքի վայր ժամանած ոստիկանները պարզել են, որ վնասվածքը պատճառել է ուսանող Գագիկ Կարենի Մելքոնյանը՝ պատգամավոր Գագիկ Մելքոնյանի թոռը: Քննչական կոմիտեից հայտնել էին, որ նշված ուսումնական հաստատությունում անչափահասին վնասվածք հասցնելու դեպքի վերաբերյալ ոստիկանությունից նոյեմբերի 27-ի երեկոյան ստացվել է հաղորդում: Այդ առթիվ երեկ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հատկանիշներով: Վնասվածք ստացած անչափահասը ճանաչվել է տուժող, նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Հանգամանքները պարզելու ուղղությամբ կատարվում է քննություն:



Հաջորդ շաբաթ ՔՊ-ական պատգամավորները կհավաքվեն՝խմբակցության նիստի: ArmLur.am-ը գրել էր, որ հաջորդ շաբաթ Նիկոլ Փաշինյանը եւ նախարարները գնալու են ԱԺ՝եկող տարվա բյուջեի նախագծի քննարկմանը մասնակցելու: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ դեկտեմբերի 5-ին մեկնարկելիք ԱԺ նստաշրջանից առաջ՝երկուշաբթի երեկոյան, ՔՊ-ականները հավաքվելու են, որպեսզի պատրաստվեն Նիկոլ Փաշինյանին դիմավորելու: Իշխանական պատգամավորները որոշելու են՝որ նախագծին ինչպես են քվեարկելու, վարչապետին ինչ հարցեր են ուղղելու, եւ, որ ամենակարեւորն է, ինչպես են անցկացնելու բյուջեի նախագծի քննարկումը եւ քվեարկությունը, որպեսզի միջադեպեր չլինեն:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՊԲ նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանի գործով բոլոր կողմերը միջնորդություն են ներկայացրել դատարան, որ չեն ցանկանում՝դատական նիստերը կայանան Սյունիքի մարզի Սիսիանի նստավայրում: Գնդակը դատավոր Գարիկ Աբելյանի դաշտում է, եւ նա կորոշի քրեական գործով ներկայացված միջնորդությունը բավարարել եւ գործը ուղարկել Երեւան, թե այն թողնել Սիսիանում: Նշենք, որ ՊԲ նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանի մեղադրանքի գործը դատարանում է, եւ նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, զբաղեցնելով Պաշտպանության բանակի հրամանատարի պաշտոնը, կոչումով՝գեներալ-լեյտենանտ, հանդիսանալով պաշտոնատար անձ՝հանրային ծառայող, կոչման եւ պաշտոնի բերումով հանդիսանալով հրամանատար՝ծառայողական դիրքով եւ զինվորական կոչումով, տվյալ իրավահարաբերության շրջանակում ունենալով իր լիազորություններից բխող հրամաններ եւ կարգադրություններ տալու ու դրանց կատարումն ապահովելու իրավասություն, հայտարարված ռազմական դրության ժամանակ՝2020թ. հոկտեմբերի 12-ին, ծառայության նկատմամբ դրսեւորել է անփույթ վերաբերմունք, իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ եւ անփույթ վերաբերմունքի հետեւանքով դրանք կատարել է ոչ պատշաճ, ինչն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ:

Արցախի ՊԲ նախկին հրամանատար Սամվել Բաբայանը երեկ հրավիրվել էր 44-օրյա պատերազմի քննիչ հանձնաժողով: Հիշեցնենք, որ նույն Քննիչ հանձնաժողովի ձեւավորման սկզբնական փուլում Սամվել Բաբայանը՝ որպես արտախորհրդարանական ուժի ղեկավար, մասնակցում էր հանձնաժողովի աշխատանքներին: Նա հետո հայտարարեց, թե խաղի կանոնները չեն պահպանվում հանձնաժողովում, ու ինքն այլեւս չի մասնակցելու դրա աշխատանքներին: «Եթե կան խաղի կանոններ, եթե խաղի կանոնները չեք պահում, չի ստացվում: Եթե ինչ-որ մեկին անուն ունեն խայտառակելու, ես չունեմ»,- ասել էր նա: Այսօր արդեն փաստացի իրավիճակ է փոխվել, ու Սամվել Բաբայանը հրավիրյալի կարգավիճակով գալիս է հանձնաժողով: «Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվել է Սամվել Բաբայանից՝ինչ է արդյոք փոխվել հիմա, որ համաձայնել է նորից գալ հանձնաժողով, արդյոք հիմա խաղի կանոնները պահպանվում են: «Փոխվել է այն՝ընդդիմությունն ասել է՝Սամվել Բաբայանը հանձնաժողովում չպետք է լինի որպես անդամ, այլ պետք է պատասխան տա իր արածների համար: Ինձ հրավիրել են, ես էլ եկել եմ: Ես հանձնաժողովի անդամ չեմ, պատասխանատու չեմ, չգիտեմ՝ պահպանվում է, թե ոչ»,-ասաց Բաբայանը:

⇨ էջ 2

ԶՐՈՒՅՑ

ՍԱՄՎԵԼ ԲԱԲԱՅԱՆՆ ՈՒ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Արցախի ՊԲ նախկին հրամանատար Սամվել Բաբայանը երեկ եկել էր 44-օրյա պատերազմի քննիչ հանձնաժողով՝ պատասխանելու ՔՊ-ական պատգամավորների հարցերին: Գո՞հ է արդյոք Սամվել Բաբայանը քննիչ հանձնաժողովի աշխատանքից, ի՞նչ կարեւոր բացահայտումներ է հանձնաժողովն արել: Այս հարցերի շուրջ զրուցել ենք Արցախի ՊԲ նախկին հրամանատար Սամվել Բաբայանի հետ:

-Դուք հանձնաժողովի ձեւավորվելուց հետո որպես արտախորհրդարանական ուժ եք մասնակցում ընտրություններին, հետո ասացիք, որ խաղի կանոնները չեն պահպանվում, եւ դուրս եկաք հանձնաժողովից: Հիմա ի՞նչ է փոխվել:

-Հիմա այն է փոխվել, որ ընդդիմությունը ասել է, որ պարոն Բաբայանը չպետք է լինի հանձնաժողովում որպես անդամ, այլ պետք է պատասխան տա արածների համար. հրավիրել են, եկել եմ՝ պատասխանելու:

-Այսինքն՝ խաղի կանոնները պահպանվո՞ւմ են: Արդեն ավարտվում է աշխատանքը դեկտեմբերին, բայց այդպես էլ որեւէ բացահայտում չկա:

-Ես այստեղ պատասխանատու չեմ, ղեկավար չեմ այդ հանձնաժողովի: Պահպանում է, թե չի պահպանում, տեղյակ չեմ:

-Գո՞հ եք աշխատանքից:

-Ինձ ուղղված հարցերից գոհ եմ:

-Իսկ, պարոն Բաբայան, ինչ եկել եք Հայաստան, հանդիպե՞լ եք Նիկոլ Փաշինյանին:

-Ո՛չ, չեմ հանդիպել:

-Ձեզ հաճախ տեսնում են իշխանական պատգամավորների հետ:

-Այո՛, կարող եմ պատգամավորների հետ հանդիպել:

-Առաջարկ չի՞ եղել հանդիպելու, հարցեր քննարկելու:

-Ո՛չ, նման բան չի եղել:

Հավելենք նաեւ, որ դեկտեմբերի 3-ին արդեն Անդրանիկ Քոչարյանի գլխավորած 44-օրյա պատերազմի ԱԺ քննիչ հանձնաժողովն ավարտում է իր աշխատանքը, ուստի Սամվել Բաբայանը վերջին հրավիրյալն էր:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԺ ՆԱԽԱԳԱՀՆ ԱՆՀԱՆԳԻՍՏ ԷՐ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը գիտերը սոցիալական ցանցի իր էջում գրառում է կատարել. «Լրատվականներից մեկի մեկնաբանություններն եմ կարդում իմ այսօրվա ճեղազրույցի այն հատվածի տակ, ուր ասել եմ, որ գալու է ժամանակ, որ հայերը եւ ադրբեջանցիները առրեն իրար կողմի: Պարզ է, որ մի նոր բան չի ասվել, եւ բացահայտում չկա նրա մեջ, որ երկու հարեւան պետության գոյատեւման լավագույն տարբերակը խաղաղ առրելն է եւ առեւտուր անելը: Երկարատեւ արյունալի պատերազմներից հետո խաղաղ առրելու օրինակները շատ են, իսկ այլընտրանք ուղղակի չկա:

Բայց, արի ու տես, մեկնաբանություններն այլ բանի մասին էին: Բովանդակալից ոչինչ չկար, զուտ վիրավորանքներ եւ հուզմունք: Փորձեցի հասկանալ՝ ովքեր են այս մարդիկ, որոնք այդքան սրտացավ են եւ չեն ուզում ապրել ադրբեջանցիների հետ կողք կողքի, եւ ոչ մի զարմանալի բան չբացահայտվեց: Եթե մի կողմ դնենք անիծող երիտասարդ մայրերին, քաղաքականությամբ զբաղվող վիզաժ-մակիաժ-տատուաժ անող տիկնանց, պարզվում է՝ նրանց մեծ մասը բնակվում է ՌԴ-ում, եւ, օրինակ, Ստավրոպոլ քաղաքից ինքը չի ցանկանում, որ հայերը ապրեն ադրբեջանցիների հետ կողք կողքի, եւ թեկուզ գրում է ռուսատառ, բայց, իր պատկերացմամբ, հայերեն, հաճախ նույնիսկ գերազանց ռուսերենի եւ հայերենի տիրապետումը չի օգնում լիարժեք հասկանալ, թե ինչ է ցանկացել ասել այդ հայորդին: Մի փոքր մաս էլ բնակվում է ԱՄՆ-ում եւ, բնական է, նույնպես չի ուզում ապրել ադրբեջանցիների հետ կողք կողքի եւ անընդունելի է համարում իմ ասածը:

Հետաքրքիր մի տեսակ էլ կա, որ աչքի է ընկնում հայհոյանքների շքեղությամբ, եւ վստահ կարող եմ ասել, թե որքան շքեղ են հայհոյանքները, այնքան հեռու են ապրում նրանք Հայաստանից, եւ այդքան արագ էլ անհետանում են, երբ փորձում ես կապ հաստատել եւ հասկանալ, թե ինչն է այդքան զայրացրել Ստավրոպոլում ապրող, իր էջում Հիսուսի եւ զենքի նկարներ տեղադրող եւ մեքենայի սպիդոմետրը վիդեո նկարած այդ հայրենասեր երիտասարդ հայորդուն:

Բայց չկարծեք, թե բողոքում եմ կամ նեղսրտում. պարզ է, որ հանրային մարդը, քաղաքական գործիչը կարող է եւ պետք է քննադատվի, այն էլ՝ մեր ժամանակներում, երբ նույնիսկ իրենց թոռների եւ մազերի սանրվածքների շքերթով փայլող կանայք չեն խորշում վերջին հայհոյանքները տալ եւ լսել:

Հակառակը, թող սովորեն, լսեն, ֆիքսեն, որ ամեն բան անելու եմ, որ խաղաղություն լինի, որ իրենք էլ հանգիստ, չվախենալով ոչինչից, վերցնեն իրենց ընտանիքներին եւ վերջապես վերադառնան՝ Հայաստանում ապրելու»:

ՊԱՐՏՔ Է ՊԵՏՈՒԹՅԱՆԸ

Դեռ այս տարվա օգոստոսին հայտնի էր դարձել, որ Ծաղկաձորում գտնվող «Գոլդեն փելիս» հյուրանոցի սեփականատերը չի կատարել պետության առաջ ստանձնած պարտավորությունը: 2018 թ.-ից հետո հայտնի դարձած գործարարի՝ Նարեկ Նալբանդյանի ընկերությունը տարաժամկետ վճարման պայմանով էր ձեռք բերել հյուրանոցը: Հյուրանոցի գնման երկրորդ վճարումը, որ պիտի կատարվեր այս տարվա հուլիսի 1-ին, չի արվել: Ըստ ժամանակացույցի՝ գնորդը մինչեւ 2023 թ.-ի հուլիսի 1-ը պետությանը պետք է վճարեր 1 միլիարդ դրամ: Այսինքն՝ անգամ «փակովի» տարբերակով ձեռք բերված պետական գույքի համար ամբողջական վճարումներն արված չեն, բայց Նիկոլ Փաշինյանը համառ լռում է:

Ու թեեւ Նարեկ Նալբանդյանը դեռ պարտք է պետությանը, այնուամենայնիվ, հայտնի դարձավ, որ գերշքեղ ու գերթանկարժեք հյուրանոցը այս օրերին նախապատրաստվում է վերաբացման: Մինչ այդ գրեթե մեկ տարի, եթե ոչ ավելի, այն վերանորոգման մեջ էր:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ գործարար Նարեկ Նալբանդյանին պատկանող Ծաղկաձորի «Գոլդեն Փելիս» հյուրանոցի բացման պաշտոնական արարողությունը տեղի կունենա դեկտեմբերի 23-ին: «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց գործարար Նարեկ Նալբանդյանի հետ, որը մեզ հետ զրույցում նշեց, որ բացման օրվա հյուրերի մասին դեռ հստակ ցանկ չկա, այն կլինի առաջիկայում, բայց Ամանորի համար արդեն նախապատրաստական աշխատանքներ են տարվում.

«Կազմակերպչական աշխատանքները դեռ ընթացքում են, ավարտված չեն, մեծ թիմ է աշխատում: Մեր հյուրանոցի գլխավոր տնօրենը Մահմուդ Սահադն է, ում դրսից ենք բերել: Անձամբ ես չեմ զբաղվում հյուրերի ցանկով եւ կազմակերպչական աշխատանքներով»:

Նարեկ Նալբանդյանը մեզ հայտնեց նաեւ, որ Ծաղկաձորի «Գոլդեն Փելիս» հյուրանոցում ամանորյա միջոցառում է անցկացվելու, որին մասնակցելու են հայ հայտնի երգիչներ եւ երգչուհիներ:

«Միջոցառմանը, որ նախատեսվում է կազմակերպել Ամանորին, երգելու են Իվետա Մուկուչյանը, Սարո Թովմասյանը, «Հայաթ Փրոջեքթ»-ը, կարճ ասած՝ մեծ միջոցառում ենք նախատեսում»,- հայտնել է Նալբանդյանը:

Հավելենք նաեւ, որ «Ժողովուրդ» օրաթերթը նախկինում գրել էր, որ «Գոլդեն Փելիս»-ում մեծ վերանորոգման աշխատանքներ էին իրականացնում, նույնիսկ գույքը հանվել էր վաճառքի բավականին մատչելի գնով:

Հիշեցնենք նաեւ, որ դեռ օգոստոսի 24-ին հենց այս հյուրանոցում անցկացվեց ԵԱՏՄ արտահերթ նիստը, որին մասնակցել էին Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի եւ Ղրղզստանի վարչապետները:

Իսկ ինչ վերաբերում է պարտքերի տակ գտնվող Նարեկ Նալբանդյանին, ապա նա նոր ծնվող օլիգարխ է, որը թեեւ պետությանն ահռելի պարտքեր ունի, չգիտես՝ ինչպես, վերջին տարիներին կառուցել է 12 գործարան:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐԲ ԿԱ՞

«Մենք վերցրել ենք «Ռոսսելխոզնադզորի» հրապարակած նյութերը եւ ուսումնասիրում ենք դրանք, որպեսզի հասկանանք, թե ինչքանով են մեր տնտեսվարողների արտադրած ապրանքները անհամապատասխան այն կարգավորումներին, որոնք Ռուսաստանի Դաշնությունը կիրառում է»,- նոյեմբերի 29-ին Ազգային ժողովում լրագրողների հետ զրույցում ասաց էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը:

Հարցին՝ տեսնում է արդյոք քաղաքական տարրեր այս գործընթացներում, նախարարն ասաց. «Ես այդպես չէի ասի. մեզ համար ուղղակի տարօրինակ է, որ մեկ ամբողջ տարվա մեջ 35 մեքենա է վերադարձվում, եւ հետո՝ երկու օրվա մեջ, եւս 35 մեքենա: Դա՝ այն դեպքում, երբ մատակարարները իրենք ապրանքների որակի մեջ որեւէ փոփոխություն չեն արել»:

Քերոբյանի խոսքով՝ Հայաստանը ԵԱՏՄ շրջանակներում գործողություններ է սկսել խնդիրները լուծելու համար: «Հրավիրվել ենք հրատապ խորհրդակցություն, որը տեղի կունենա առաջիկա 2 օրերի ընթացքում»,- ասաց Քերոբյանը:

Լրագրողի հարցին՝ ռուսական շուկային որպես այլընտրանք ստեղծվել է արդյոք մեկ այլ արտահանման շուկա, Քերոբյանն ասաց. «Ի՞նչ է նշանակում՝ արտահանման այլընտրանք ստեղծել, այսինքն՝ այդ ապրանքը այսօր հնարավոր չէ՞ արտահանել Իրաք, ԱՄԷ եւ այլն: Ցանկացած արտահանող ինքը պետք է բանակցի իր գնորդների հետ եւ իր ապրանքը վաճառի տարբեր շուկաներում: Կառավարությունը օգնում է, որ տասնյակ արտահանողներ գնան Չինաստան ցուցահանդեսի, այնտեղ ձեռք բերեն նոր գործընկերներ եւ այլն»:

Հիշեցնենք, որ Լարսում 100-ավոր բեռնատարներ չեն կարողանում անցնել Ռուսաստանի սահմանը: Պտուղբանջարեղենով, ծաղիկներով, ձկնով եւ այլ սննդամթերքով բեռնված ավտոմեքենաները անցակետում գտնվող ֆիտոսանիտարական կետում խիստ վերահսկողություն են անցնում: Ռուսաստանում Հայաստանի դեսպանությանը կից մաքսային կցորդը հայտնել էր, որ խնդիրը միայն հայկական բեռնատարների հետ կապված չէ. խիստ հսկողություն է Ռուսաստան մտնող բոլոր մաքսակետերում:

ԽՈՍԵՑ

ՍԱՄՎԵԼ ԲԱԲԱՅԱՆ ՈՒ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի նախկին հրամանատար, անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Սամվել Բաբայանը ներկայացրել է իր մասնակցությամբ տեղի ունեցած՝ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող ԱԺ քննիչ հանձնաժողովի նիստի քննարկման արդյունքները:

«Ես ամբողջովին ներկայացրել եմ իրավիճակը եւ 44-օրյա պատերազմի ժամանակ, եւ հիմա: Ես անուններով չեմ խոսել, ես դրվագներով, փաստերով հուշել եմ, թե ինչ ուղղությամբ կարող է լինել քննությունը: Ես եկել եմ որպես քաղաքացի, ներկայացրել եմ այն, ինչից տեղյակ եմ եղել: Հանձնաժողովը կհասնի իր նպատակին, թե ոչ, ես չեմ կարող ասել»,- «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ լրագրողների հետ ճեպազրույցում ասաց Բաբայանը:

Հարցին, թե արդյոք 44-օրյա պատերազմում կրած պարտությունում տեսնում է վարչապետ Նիկոլ Փաշինյանի մեղավորությունը, Բաբայանը պատասխանեց, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մեղավորությունը ոչ ճիշտ կադրային քաղաքականությունն էր եւ այն, որ նա հավատացել էր իր նշանակած կադրերի զեկույցներին:

Նիստից առաջ լրագրողների հետ ճեպազրույցում Բաբայանն ասաց, որ պատրաստ է պատասխանել պատգամավորների բոլոր հարցերին:

«Հրավիրել են, եւ ես համաձայնել եմ ներկա գտնվել եւ հարցերին պատասխանել: Ինչի՞ պետք է խուսափեմ, եթե ես պատրաստ եմ բոլոր հարցերին պատասխանել: Այն հարցերին, որոնք ինձ կուղղեն, ես կպատասխանեմ անկեղծ»,- ասաց Բաբայանը:

Իսկ արդեն նիստից հետո հայտարարեց, թե Արցախում տեղի ունեցած իրադարձությունների հարցով ընթանում է քննություն, եւ առաջինը ինքն է հարցաքննության հրավիրվել Քննչական կոմիտե: Այն, ինչ խոսել են Հանրային հեռուստատեսությամբ, ավելի ծավալուն ներկայացվել է իրենց:

Նա հստակեցրեց, որ խոսքը վերաբերում է իր ներկայացրած հաղորդմանը, զենք-զինամթերքը Ադրբեջանին հանձնելուն, իր կողմից Բաքվի հետ բանակցություններին, Սահմանադրության տապալմանը:

Հարցին, ինքն էլ է կարծում արդյոք, որ Արցախի պետական ինստիտուտները չպետք է գործեն Հայաստանում, Սամվել Բաբայանն ասաց. «Ես առաջին օրը հենց վարչապետին առաջարկել եմ հատուկ ծրագրերի վարչություն ստեղծել, որը գործել է 1990-ականներին Մոսկովյան փողոցի վրա, եւ այդ միջոցով, ինչպես Դուք եք ձեւակերպում, Ղարաբաղի ժողովրդին տեր կանգնել բոլոր հարցերով: Նիկոլ Փաշինյանը մերժել է, չի ասել՝ ինչու է մերժել: Երեւի մի օր կհանդիպեմ, կխոսեմ: Ես գրավոր եմ ուղարկել առաջարկը, Նիկոլ Փաշինյանին երկու տարուց ավելի է՝ ո՛չ տեսել եմ, ո՛չ խաբար եմ, ո՛չ գիտեմ»:

44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող ԱԺ քննիչ հանձնաժողովն առաջին նիստը գումարել է 2022 թվականի փետրվարին: Այդ օրվանից մինչ այս պահը բազմաթիվ պաշտոնյաներ ու զինվորականներ են հարցաքննվել: Նիստին մասնակցել է նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, որի մասնակցությամբ նիստը, ի տարբերություն նախորդների, բաց էր: Հանձնաժողովի նախորդ նիստին մասնակցել է նաեւ Լեռնային Ղարաբաղի նախագահ Սամվել Շահրամանյանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի ծրագրերի մեջ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հեռախոսազրույց դեռեւս ներառված չէ: Այս մասին հայտարարել է ՌԴ նախագահի մամուլի խոսնակ Դմիտրի Պեսկովը:

«Փաշինյանին սպասում են դեկտեմբերի վերջին Ռուսաստանում կայանալիք ԱՊՀ-ի ոչ պաշտոնական գագաթնաժողովին. սա հիանալի հնարավորություն կլինի խոսելու համար»,-ասել է նա:

ՋԻՆՎՈՐՆԵՐԻ ԱԶԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆ

Պաղեստինյան «ՀԱՄԱՍ» արմատական շարժումը գերեվարված իսրայելցի զինվորների ազատման համար պայման է առաջադրել Գազայի հատվածում մշտական հրադադարը. այս մասին հայտնում է «ՏԱՍՍ» գործակալությունը:

Նշվում է, որ եգիպտական «Ալ Կահիրա ալ Իխբարիա» հեռուստաալիքի տեղեկատվության համաձայն՝ պաղեստինցի արմատականները հաստատել են, որ «իսրայելցի զինվորականների ազատ արձակման պայմաններն այլ են լինելու»: Մասնավորապես, այս հարցի շուրջ բանակցությունները ներառում են «ռազմական գործողությունների ավարտի» եւ Գազայի հատվածի «շրջափակման վերացման» քննարկում:

Իսրայելի եւ պաղեստինյան «ՀԱՄԱՍ» արմատական շարժման միջեւ քառօրյա հրադադար էր հաստատվել նոյեմբերի 24-ին: Հրադադարի ավարտից հետո դրա գործողության ժամկետը եւս երկու օրով երկարաձգվել էր: Այս օրերի ընթացքում «ՀԱՄԱՍ»-ն ազատ է արձակել իր մոտ պահվող 240 պատանդներից ավելի քան 80-ին, դրա դիմաց Իսրայելն ազատել է պաղեստինցի 180 բանտարկյալի:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՍԱՀՄԱՆԻՆ

Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանազատման հանձնաժողովների՝ նոյեմբերի 30-ին նախատեսված հանդիպումը կկայանա հայ-ադրբեջանական սահմանագծի Իջեւանի ու Ղազախի հատվածում:

Այս մասին հայտնում են ՀՀ փոխվարչապետ, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման եւ սահմանային անվտանգության հանձնաժողովի նախագահ Միհր Գրիգորյանի գրասենյակից:

Ավելի վաղ Հայաստանն Ադրբեջանին առաջարկել էր սահմանազատման հանձնաժողովների հանդիպում անցկացնել հայ-ադրբեջանական սահմանին: Այնուհետեւ հայտնի դարձավ, որ հանդիպման մասին կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել. այն կկայանա նոյեմբերի 30-ին:

ԿՄԱՍՆԱԿՑԻ ՆԻՍՏԻՆ

Արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն աշխատանքային այցով գտնվում է Հյուսիսային Մակեդոնիայի մայրաքաղաք Սկոպյեում, որտեղ կմասնակցի ԵԱՀԿ ԱԳ նախարարների խորհրդի 30-րդ նիստին. «X»-ի իր միկրոբլոգում հայտնում է ՀՀ ԱԳՆ մամուլի խոսնակ Անի Բաղալյանը:

«Այցի ընթացքում նախատեսված են նաեւ երկկողմ հանդիպումներ»,- գրել է նա:

ԿԲԵՐԵՆ

ՔՊ-ԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹՈՌՆ ՈՒ ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Ազգային ժողովի ՔՊ-ական պատգամավոր Գագիկ Մելքոնյանի թոռան մասնակցությամբ միջադեպի գործով ներքին պայմանավորվածություն կա:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ական պատգամավորի ընտանիքը իրավապահների հետ կապի է դուրս եկել, խոստացել են թոռանը բերել հարցաքննության, որ լսեն, թե նա ինչ կպատմի միջադեպի մասին: Իսկ ինչ է կատարվում ՔՊ-ական պատգամավոր Գագիկ Մելքոնյանի թոռան շուրջ:

Երեք օր առաջ համացանցում տեղեկություններ տարածվեցին, որ Երեւանի իրավատնտեսագիտական եւ կառավարման քոլեջում դանակահարություն է տեղի ունեցել պատգամավոր Գագիկ Մելքոնյանի թոռան մասնակցությամբ: Մելքոնյանի թոռը, ըստ այդ աղբյուրի, դանակահարել է նույն համալսարանի մեկ այլ սանի:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած բացառիկ տեղեկություններով՝ միջադեպի ականատեսներ կան, որոնք կցկտուր տեղեկություններ են հայտնել իրավապահներին, որ Գագիկ Կարենի Մելքոնյանն է վնասվածքը հասցրել այդ տղային:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ հարցաքննության ժամանակ տուժած ուսանողն իրավապահներին հայտնել է, թե ծառից է ընկել: Դեպքի վայր ժամանած ոստիկանները պարզել են, որ վնասվածքը պատճառել է ուսանող Գագիկ Կարենի Մելքոնյանը՝ պատգամավոր Գագիկ Մելքոնյանի թոռը: Նկատենք, որ ՔՊ-ական պատգամավոր Գագիկ Մելքոնյանի որդիները հեղափոխությունից հետո իրենց դիրքերն են ամրապնդում իրավապահ համակարգում: Արմեն Մելքոնյանը այս տարվա ապրիլի 1-ին նշանակվել է «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմարկի պետ: Դանակահարության միջադեպի գործով անցնող Գագիկ Կարեն Մելքոնյանի հայրը՝ Կարեն Մելքոնյանը, Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավարն է: Ինչեւէ, հետեւենք զարգացումներին, տեսնենք, թե ինչ է սպասվում միջադեպով, արդյոք նախաքննական մարմինը մինչեւ վերջ կգնա եւ կբացահայտի եղելությունը, թե այս դեպքն էլ ՔՊ-ական մյուս պաշտոնյաների հարազատների դեպքերի նման կփակվի: Նշենք, որ «Ժողովուրդ» օրաթերթին ՀՀ քնչական կոմիտեից հայտնել էին, որ նշված ուսումնական հաստատությունում անչափահասին վնասվածք հասցնելու դեպքի վերաբերյալ ոստիկանությունից նոյեմբերի 27-ի երեկոյան ստացվել է հաղորդում: Այդ առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հատկանիշներով: Վնասվածք ստացած անչափահասը ճանաչվել է տուժող, նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Հանգամանքները պարզելու ուղղությամբ կատարվում է քննություն:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԴԱՏՎՈՒՄ ԵՆ. ՋՈՐԱՄԱՍԸ ԼՔԵԼ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Ռոման Գալստյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության պայմաններում նշանակված լինելով գնդացրորդի պաշտոնին, կոչումով շարքային, ընդգրկված լինելով մարտական գործողություններին, 2020 թվականի հոկտեմբերի 6-ին ինքնակամ թողել է ծառայության վայրը եւ ՀՀ ՊՆ թիվ զորամասում հանձնելով իրեն ամրակցված զենք-զինամթերքը՝ մեկնել է իր բնակության վայր, որից հետո՝ 2020թ.-ի նոյեմբերի 20-ին, վերադարձել է ՀՀ ՊՆ թիվ զորամաս ու ներգրավվել մարտական հերթապահության՝ այդկերպ զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելով 240 ժամից ավելի տեւողությամբ:

Գեւորգ Շահնազարյանին եւ Մարգար Մարգարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, հանդիսանալով պարտադիր ժամկետային զինծառայողներ, ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության պայմաններում 2021թ.-ի նոյեմբերի 7-ին՝ ժամը 16:30-ի սահմաններում, զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելու նպատակով ինքնակամ թողել են ծառայության վայրը, իսկ 2021թ.-ի մարտի 29-ին՝ ժամը 18:10-ին, ինքնակամ ներկայացել են զորամաս՝ ծառայությունից բացակայելով 3385 ժամ 40 րոպե տեւողությամբ:

Խաչիկ Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության ժամանակ ընդհանուր զորահավաքի միջոցով զորակոչված եւ որպես պահեստազորային հաշվառված լինելով ՀՀ ՊՆ համապատասխան զորամասում, մարտական խնդիր կատարելու համար մեկնել է առաջնագիծ, որից հետո՝2020թ.-ի հոկտեմբերի 6-ին, զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով ինքնակամ թողել է ծառայության վայրը՝ կատարելով դասալքություն:

Վրեժ Հովսեփյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության ժամանակ ընդհանուր զորահավաքի միջոցով զորակոչված եւ որպես պահեստազորային հաշվառված լինելով ՀՀ ՊՆ համապատասխան զորամասում, մարտական խնդիր կատարելու համար մեկնել է առաջնագիծ, որից հետո՝ 2020թ.-ի հոկտեմբերի 6-ին, զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով ինքնակամ թողել է ծառայության վայրը՝ կատարելով դասալքություն:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՂԵԿԱՎԱՐԸ՝ ԿԻՋԱԿԵՏՈՒՄ



«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ 2023 թվականի մայիսի 14-ին Արմավիրի մարզի Հայթաղ համայնքում ավտոմեքենան արագ վարելու հարցի շուրջ Արսեն Սուրենի Գասպարյանը վիճաբանել է նույն համայնքի բնակիչ Պարգեւ Գասպարյանի հետ, ինչից հետո՝ հաջորդ օրը՝ 2023 թվականի մայիսի 15-ին, հիշյալ տարաձայնությունը հարթելու նպատակով Հայթաղ համայնքի ղեկավար Բաբկեն Հրայրի Կարապետյանը վերջիններիս հրավիրել է համայնքապետարան, որտեղ, ընդհանուր զրույցի ընթացքում միմյանց չհանդուրժելով, վերստին վիճաբանություն է տեղի ունեցել Արսեն եւ Պարգեւ Գասպարյանների միջեւ, ինչը պարզաբանելու համար նույն օրը հանդիպել են հիշյալ համայնքում գտնվող «ղռեր» կոչվող տարածքում:

Նշված վայրում Պարգեւ Գասպարյանը քարով հարվածել է Սուրեն Գասպարյանի գլխին, ինչից հետո վերջինս իր երկու որդիների՝ Արսեն եւ Գեղամ Գասպարյանների հետ միասին հարձակվել է Պարգեւ Գասպարյանի վրա, որի ժամանակ Սուրեն Գասպարյանը Գեղամ Գասպարյանի հետ խմբի կազմում ձեռքերով եւ ոտքերով հարվածներ է հասցրել վերջինիս մարմնի տարբեր մասերին՝ Պարգեւ Գասպարյանի նկատմամբ կատարելով ֆիզիկական ներգործություն, իսկ Արսեն Գասպարյանը, ձեռքերով բռնելով գետնին ընկած Պարգեւ Գասպարյանի ոտքից, Պարգեւ Գասպարյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու դիտավորությամբ ոտքերով հարվածներ է հասցրել վերջինիս սեռական օրգաններին՝ Պարգեւ Գասպարյանի առողջությանը պատճառելով հետին միզուկի 2-3-րդ աստիճանի վնասվածք՝ պատի ամբողջականության խախտման ձեւով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս:

1. Արսեն Սուրենի Գասպարյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերով:
2. Պարգեւ Երջանիկի Գասպարյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:
3. Գեղամ Սուրենի Գասպարյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով:
4. Սուրեն Վանիկի Գասպարյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 28-ից 29-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 71 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՉՍՏԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ

Զավեն Մարտիրոսյանը, Ալեքսան Բաղդասարյանը, Սերգեյ Շախյանը, Արսեն Գրիգորյանը, Սամվել Մնացականյանը, Արգամ Մկրտչյանը, Արտաշես Գեւորգյանը, Վարդան Աբգարյանը աշխատել են «Պոլիմետ կորպորացիա հայ-կանադական համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ-ում, զբաղեցրել տարբեր հաստիքներ, սակայն չեն ստացել աշխատավարձերը, նրանց հետ վերջնահաշվարկ չի կատարվել, չեն վճարվել պարտք մնացած աշխատավարձի գումարները:

Ընկերությունը գրանցված է Տավուշի մարզի Վազաշեն գյուղում, 2015-2019 թվականներին Վազաշենի «Կարմիր քար» տարածքում երկրաբանական ուսումնասիրություններ է կատարել ոսկու պաշարների քանակը պարզելու եւ հետագայում շահագործելու համար:

Հայցվոր Զ. Մարտիրոսյանը՝ որպես հանքի պետ, 2014թ. նոյեմբերի 3-ից մինչեւ 2015թ. դեկտեմբերի 1-ը «Պոլիմետ»-ում գրանցված է եղել, ըստ ՊԵԿ տվյալների՝դրանից հետո՝2016թ.-ին, Զ. Մարտիրոսյանը շարունակել է նույն գործատուի մոտ կատարել նույն պարտականությունները, սակայն նրան ընդհանուր 1 միլիոն 400 հազար դրամի չափով աշխատավարձ չի վճարվել: Ա. Բաղդասարյանը՝ որպես գլխավոր երկրաբան, 2014թ. նոյեմբերի 3-ից մինչեւ 2015թ. դեկտեմբերի 1-ը գրանցված է եղել «Պոլիմետ» -ում՝ ըստ ՊԵԿ տվյալների: Դրանից հետո՝ 2016թ.-ին, Ա. Բաղդասարյանը շարունակել է կատարել աշխատանքային նույն պարտականությունները, սակայն նրան աշխատավարձ չի վճարվել:

Ս. Շախյանը՝ որպես «բրիգադիր», 2014թ. նոյեմբերի 3-ից մինչեւ 2015թ. դեկտեմբերի 1-ը «Պոլիմետ»-ում գրանցված է եղել՝ ըստ ՊԵԿ տվյալների: Դրանից հետո՝2016թ.-ին, նա շարունակել է նույն գործատուի մոտ կատարել նույն պարտականությունները, սակայն նրան աշխատավարձ չի վճարվել: 2023թ. հոկտեմբերի 24-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Դիլիջանի նստավայրում դատավոր Նանա Դալլաքյանը վճռել է հայցը բավարարել, «Պոլիմետ կորպորացիա հայ-կանադական համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ-ից հօգուտ Զ. Մարտիրոսյանի բռնագանձել 1 միլիոն 400 հազար դրամ՝ որպես չվճարված աշխատավարձ, նույն ընկերությունից, որպես չվճարված աշխատավարձ, հօգուտ Ա. Բաղդասարյանի բռնագանձել 1 միլիոն 800 հազար դրամ, հօգուտ Ս. Շախյանի բռնագանձել 450 հազար դրամ, հօգուտ Ա. Գրիգորյանի՝ 250 հազար դրամ, հօգուտ Ս. Մնացականյանի՝ 180 հազար դրամ, հօգուտ Ա. Մկրտչյանի՝ 250 հազար դրամ, հօգուտ Ա. Գեւորգյանի՝250 հազար դրամ, հօգուտ՝Վ. Աբգարյանի՝ 250 հազար դրամ, «Պոլիմետ կորպորացիա հայ-կանադական համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ-ից բռնագանձել 144 հազար 900 դրամ՝ որպես պետական տուրքի գումար: Սույն վճիռը մեկամսյա ժամկետում չի բողոքարկվել, մտել է օրինական ուժի մեջ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Տավուշ

ՍԿԱՆԴԱԼԱՅԻՆ

ՆԱԽԿԻՆ ԹԱՂԱՊԵՏԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԱԾ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Դեռեւս նոյեմբերի սկզբին իրավապահների եւ հասարակության ուշադրության կենտրոնում հայտնվեց Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին ղեկավար, ՔՊ-ական Արման Բարխուդարյանը: Բարխուդարյանն ու թաղապետարանի մի քանի աշխատակիցներ մեղադրվում էին գնումները ոչ պատշաճ իրականացնելու համար:

Նրան բերման էին ենթարկել, ապա ազատ են արձակել, խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը՝ երկրից չբացակայելու վերաբերյալ:

Դեպքից հետո եթե Արման Բարխուդարյանի թիմակիցները կապի մեջ էին, անընդհատ պայքարում էին լրատվականներում իրենց մասին ինֆորմացիայի ամեն տառի, բառի ճշտության ու իրենց մեկնաբանության առկայության համար, ապա «պարագլուխն» անցավ ընդհատակ: Նախկինում գործող որեւէ հեռախոսահամար եւ կոնտակտային այլ միջոցներ միանգամից դարձան անհասանելի եւ շարունակում են այդպես մնալ մինչ օրս:

Հարկ ենք համարում նշել, որ Բարխուդարյանը ազատ արձակվելուց հաշված ժամեր անց մասնակից էր դարձել ՔՊ-ականների քեֆ-ուրախությանը «Շատո» ռեստորանում:

Արման Բարխուդարյանը տարբեր ժամանակներում տարբեր պաշտոններ է զբաղեցրել: Մինչ վարչական շրջանի ղեկավար նշանակվելը նա ԱԺ փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանի խորհրդականն էր, իսկ դրանից առաջ՝2019-2020 թթ., այդ ժամանակ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակի մարդասիրական օգնության ծրագրերի վարչության պետն էր:

ՔՊ-ական նախկին թաղապետ Արման Բարխուդարյանը հայտնի է սկանդալային վարքագծով:

Մեր տեղեկություններով՝ նա գրեթե մշտապես կոնֆլիկտներ է ունեցել իր աշխատակիցների, ինչպես նաեւ իշխանության տարբեր ներկայացուցիչների հետ:

Խոսակցություններ կան, որ նա իր թաղապետ եղած ժամանակ նույնիսկ պարգեւավճարներ է բաժանել, ապա պարտադրել՝ այդ պարգեւավճարները վերադարձնեն:

Իսկ ի՞նչ է հայտարարագրել այս ամենի ֆոնին սկանդալային Բարխուդարյանը, որն այժմ զբաղեցնում է Ազգային ժողովի նախագահի տեղակալ, Բարխուդարյանի երեխաների քավոր Ռուբեն Ռուբինյանի խորհրդականի պաշտոնը: Նա հայտարարագրել է 2 հողամաս՝միանձնյա սեփականությամբ, որոնք գնվել են 2020 թվականին Երեւանում:

Բարխուդարյանի հետ համատեղ բնակվում է 5 անձ՝ կինը՝ Ինեսա Խոսրովյանը, անչափահաս զավակները՝ Կարեն եւ Ռուբեն Բարխուդարյանները, եւ համատեղ բնակվող Հասմիկ Նորազյանը եւ Գագիկ Բարխուդարյանը:

Նախկին թաղապետը չի հայտարարագրել բնակարան, սակայն տարեսկզբին հայտարարագրել է 3 մեքենա՝Daewoo, Nissan, Citroen մակնիշների մեքենաներ, որոնք ձեռք են բերվել 2020-2021 թվականներին: Տարվա ընթացքում Բարխուդարյանը ձեռք է բերել MINI մակնիշի մեքենա, որը արտադրված է 2005 թվականին: Խորհրդականը այս մեքենան ձեռք է բերել Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից 890 հազար դրամով: Daewoo եւ Nissan մակնիշի մեքենաները տարվա ընթացքում օտարվել են համապատասխանաբար 800 եւ 750 հազար դրամով: Արդյունքում տարեվերջին նա ունեցել է 2 մեքենա՝Citroen եւ MINI մակնիշի մեքենաներ: Նրա կանխիկ դրամական միջոցները կազմել են 10 մլն դրամ եւ 3 հազար ԱՄՆ դոլար: Նրա՝ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 7 մլն 158 հազար դրամ, որից 6 մլն 871 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ ԱԺ աշխատակազմից, իսկ 286 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է «Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկից: Բարխուդարյանը բնակարան չունի, սակայն հայրը՝ Գագիկ Բարխուդարյանը, հայտարարագրել է միանձնյա սեփականությամբ անհատական բնակելի տուն, որը 2011 թվականին ժառանգություն են ստացել: Բարխուդարյանի կինը՝ Ինեսա Խոսրովյանը, հայտարարագրել է հողամաս՝ Արարատի Նոր Խարբերդ համայնքում: Նա 2019 թվականին ձեռք է բերել BMW մակնիշի մեքենա՝ 2002 թվականին արտադրված: Կինը ոչ մի եկամուտ չի հայտարարագրել:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ, ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԿԳՄՄՆ–Ն ՄԵՔԵՆԱ Է ԼՎԱՆՈՒՄ

ԿԳՄՍ նախարարությունը, դասագրքերի գնումները եւ տպագրությունը ձախողելուց բացի, հետաքրքիր գնումներ է կատարել 2023 թվականի ընթացքում: Նախարարությունն այս տարվա ապրիլին «Սպասարդ» ՍՊԸ-ի հետ կնքել է պայմանագիր, որի ընդհանուր արժեքը կազմել է 504 հազար դրամ:

Պայմանագիրը կնքվել է ապրիլի 3-ին: Այն իրենից ենթադրում է ավտոմեքենաների լվացման եւ նմանատիպ ծառայություններ: Նախատեսվում է թվով 6 մարդատար ավտոմեքենաների թափքի լվացում եւ սրահի մաքրում: Մեքենաները Toyota մակնիշի են, պատկանում են Camry եւ Corola մոդելների՝1,6 եւ 2,5 լիտրանոց շարժիչներով: Պայմանագրում մանրամասն ներկայացված է նաեւ ավտոմեքենայի լվացման եղանակը, այն է՝ բարձր եւ ցածր ճնշման ջրի փոշիացման սարքերի միջոցով, առանց հպման, ավտոմեքենաների լվացման համար նախատեսված հատուկ նյութերով եւ հեղուկներով: Ավտոմեքենայի սրահի մաքրումը իրականացվել է ավտոմեքենաների սրահի մաքրման համար նախատեսված մաքրող եւ փայլեցնող նյութերով եւ միջոցներով՝ներառելով սրահի ռետինե գորգերի լվացումը: Այս ծառայությունների ընդհանուր քանակը՝ տարվա կտրվածքով, յուրաքանչյուր մեքենայի համար իրականացվել է առավելագույնը 30 անգամ: Ծառայությունը մատուցվում է՝ պատվիրատուի հայտի հիման վրա, առավելագույնը 3 ժամվա ընթացքում համապատասխան կտրոնների միջոցով, որոնց տեսքը որոշվում է կողմերի միջեւ, եւ այն հաստատվում է կողմերի կնիքներով:

ԼԱՐՍԻՑ ՀԵՏ ԵՆ ՈՒՂԱՐԿՈՒՄ

Գրեթե 3 օր է՝հայ տնտեսվարողները Վերին Լարսի անցակետում խնդիրների առաջ են կանգնել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ 65,000 վարդով 2 հայկական բեռնատար Վերին Լարսից հետո են ուղարկել Հայաստան՝ պատճառաբանելով, որ կա սանիտարական խնդիր: Ձկով բեռնված բեռնատարները հետո են ուղարկվել՝պատճառաբանելով, որ ձկան տարիքը փաստաթղթերի մեջ նշված չի եղել, փաստաթղթային մի շարք խնդիրներ են եղել, նաեւ դրանց պահպանման ժամկետը նշված չի եղել: Տնտեսվարողները, որոնք ցանկացան անանուն մնալ, ասում են, որ նման ստուգումներ եղել են, առաջ ամեն ինչ լավ էր, սակայն այս անգամ անհիմն խնդիրներ են մեջբերում, որոնք տեղում լուծվող հարցեր են: Նրանք փաստում են նաեւ, որ իրենց նման դրության մեջ դնելու պատճառը հայ-ռուսական հարաբերություններն են: Անցակետի աշխատակիցներն ակնհայտորեն ասում են՝ խնդիրը սանիտարական է կամ փաստաթղթային, սակայն off the record նրանց հրամայել են հետ գնալ, իսկ իրավիճակի պատճառը եւ բացատրությունները հորդորել են ստանալ մեր կառավարությունից:

Ստացվում է, որ եթե գնանք խնդրի ավելի խորքերը եւ լսենք տնտեսվարողների խոսքերը՝կարող ենք եզրակացնել, որ այս իրարանցումը սկսվեց Հայաստանի՝ ՀԱՊԿ գագաթաժողովին չմասնակցելուց եւ ՀԱՊԿ-ից դուրս գալու մտորումների մասին բարձրաձայնելուց հետո:

Արդյունքում սանկցիաների տակ գտվող ռուսական կողմը ուզում է պատժամիջոցներ ստեղծել նաեւ Հայաստանի դեմ:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 18 ՃՏՊ. 18 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՐԿԵՐ

ՏՈՒԳԱՆՔԸ ԿՀԱՆՎԻ

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 170.3-րդ հոդվածով սահմանված է, որ պետական եւ համայնքային հարկերը բյուջե չվճարելու համար սահմանված է պատասխանատվություն՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ քսանապատիկի չափով: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նախագծով նախատեսվում է օրենսգրքի 170.3-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել՝ հաշվի առնելով վերջինիս կիրառման անարդյունավետությունը. այս մասին Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի՝ նոյեմբերի 29-ին տեղի ունեցած հերթական նիստի ընթացքում ասել է ՊԵԿ նախագահի տեղակալ Արթուր Մանուկյանը՝ առաջին ընթերցմամբ քննարկման ներկայացնելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» եւ կից օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը:

Նախագծի հաջորդ փոփոխությունը վերաբերում է օրենսգրքի 302-րդ հոդվածին, որով ասվում է, որ վարչական տույժ նշանակելու մասին որոշումը կատարման ենթակա չէ, եթե այն ի կատար չի ածվել գործող խմբագրմամբ կայացման օրվանից երեք ամսվա ընթացքում: Հստակություն եւ օրենքների միջեւ համապատասխանություն սահմանելու համար առաջարկվում է «կայացման օրվանից» արտահայտությունը փոխարինել «ամբողջակի դառնալու օրվանից» արտահայտությամբ:

««Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծով սահմանված են որոշակի վարչական պատասխանատվության տեսակներ, որոնք պետք է քննի հարկային մարմինը: Դրանց մասով վարույթներն այլեւս կիրականացվեն էլեկտրոնային եղանակով: «Դրույթների՝ ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանվել է 2023 թվականի դեկտեմբերի 1-ը, սակայն այդ ժամկետն իրատեսական չէ, ուստի առաջարկվող փոփոխությամբ նախատեսում ենք դրույթն ուժի մեջ մտցնել 2024 թվականի փետրվարի 1-ից»,- ասել է Արթուր Մանուկյանը:

Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Բաբկեն Թունյանը հետաքրքրվել է՝ որոշումը հօգուտ տնտեսվարողների է արդյոք, նախագծով տնտեսվարողների համար նախատեսված 20.000 դրամ վարչական տույժն է արդյոք վերացվում:

«Այո՛, տնտեսվարողների համար հանում ենք 20.000 դրամ տուգանք վճարելու պարտավորությունը, քանի որ, միեւնույնն է, դրա համար ֆինանսական պատասխանատվություն սահմանված է: Բազմաթիվ վարչական վարույթներ են կազմվում, սակայն արդյունքում պարզվում է, որ մեղավորություն չկա, ու դրա բացակայության պատճառով տուգանքը կա՛մ չի կիրառվում, կա՛մ կիրառվում է նվազագույն չափով»,- հարցին ի պատասխան՝ ասել է Արթուր Մանուկյանը:

Հավելենք, որ հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել օրենքների նախագծերի փաթեթին:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» Գ

«ԵՎՐՈԹԵՐՄ»-Ի ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՂԸ

«Կոնվերս բանկ»-ը հայտարարում է «Եվրոթերմ» ՓԲԸ կորպորատիվ պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխման մասին: Ազդագիրը Կենտրոնական բանկում գրանցվել է սույն թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1/575 որոշմամբ:

Թողարկման ընդհանուր ծավալը 500 մլն ՀՀ դրամ է, արժեկտրոնի եկամտաբերությունը՝12,5%, ժամկետը՝36 ամիս, տոկոսների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային:

Պրոդուկտին առավել շատ անձանց հասանելիություն ապահովելու նպատակով սահմանվել է պարտատոմսերի ձեռք բերման ցածր շեմ՝ նվազագույնը տասը հատ պարտատոմս՝ յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Ըստ որում՝ պարտատոմսեր գնել հնարավոր է նաեւ Converse Mobile հավելվածում՝ մուտք գործելով «+», ապա՝ «Կատարել ներդրում», եւ հետեւելով հրահանգներին:

«Կոնվերս բանկ»-ի ներդրումային դեպարտամենտի տնօրեն Գրիգորի Զաքարյանն ասում է. «Ուրախ ենք հայտարարել բանկի նոր B2B եւ B2C ծառայության մասին: Կորպորատիվ պարտատոմսերի տեղաբաշխմամբ ներդրողներին հնարավորություն ենք տալու դիվերսիֆիկացնել իրենց ներդրումները՝ օգտվելով նոր հնարավորությունից, իսկ թողարկող ընկերություններին՝ տեղաբաշխման արդյունքում ներգրավել միջոցներ, դառնալ ավելի հանրային ու ճանաչելի: Հարկ եմ համարում նաեւ նշել այս գործընթացի կարեւորությունը բորսայական առեւտրի աշխուժացման եւ կապիտալի շուկայի կայացման առումով՝ հաշվի առնելով իրական հատվածի կազմակերպությունների սակավաթիվ թողարկումները: Տնտեսության տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող թողարկողների

առկայությունն անչափ կարեւոր է մեր երկրի ֆինանսական շուկայի համար, ինչով պայմանավորված՝ այսուհետ ակտիվորեն աշխատելու ենք այս ուղղությամբ»:

«Եվրոթերմ» ընկերությունում նշում են, որ պարտատոմսերի տեղաբաշխումը մեծ առաջխաղացում է՝ միտված աշխատանքային գործընթացների եւ կորպորատիվ կառավարման բարելավմանը, զարգացմանը, իսկ երկարաժամկետ առումով՝ նաեւ ընկերության կազմաիրավական ձեւի փոփոխությանը:

«Եվրոթերմ» ընկերության գործադիր տնօրեն Վահե Ղազարյանն ասում է. «Ի սկզբանե «Եվրոթերմ» ՓԲԸ-ի նպատակներից է եղել դառնալ բաց բաժնետիրական ընկերություն: Արժեթղթերի թողարկումը լավագույն տարբերակներից մեկն է մեր նպատակին մեկ քայլ ավելի մոտ լինելու համար:

Պարտատոմսերի թողարկումները կբարձրացնեն ընկերության տեսանելիությունը եւ նրա նկատմամբ վստահությունը ֆինանսական շուկաներում, կնպաստեն նոր ներդրումների ներգրավմամբ արտադրության ընդլայնմանն ու կապիտալի կառուցվածքի դիվերսիֆիկացմանը: Մյուս կողմից՝սա ընկերության եւ մեր պրոդուկտների նկատմամբ հաճախորդների լոյալությունը բարձրացնելու հիանալի հնարավորություն է»:

Տեղաբաշխումից հետո պարտատոմսերը կցուցակվեն Հայաստանի ֆոնդային բորսայում երկրորդային շուկայում շրջանառվելու համար:

Նշենք, որ «Կոնվերս բանկ»-ը հիմնադրվել է 1993թ. եւ մատուցում է ունիվերսալ բանկային ծառայություններ: Սեպտեմբերի 30-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են մոտ 489 մլրդ ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 417 մլրդ ՀՀ դրամ:

«Կոնվերս բանկ»-ը ՀՀ բանկային համակարգի առաջատարներից է պարտատոմսերի թողարկման ծավալով: 2017թ.-ից ի վեր թողարկել է մոտ 41.6 մլրդ ՀՀ դրամին համարժեք ընդհանուր ծավալով դրամային եւ արտարժութային պարտատոմս, իսկ ներկա պահին Հայաստանի ֆոնդային բորսայում շրջանառվում է մոտ 19.7 մլրդ ՀՀ դրամին համարժեք ընդհանուր ծավալով դրամային եւ արտարժութային պարտատոմս:

«Եվրոթերմ» ՓԲԸ-ն հիմնադրվել է 1998թ.-ին եւ շուկայում ներկայանում է «Նոյան», «Մենք» ապրանքանիշներով, ունի սեփական այգիներ Արմավիրի մարզի Վանանդ եւ Բագարան գյուղերում:

«Եվրոթերմ»-ը ՀՀ-ում հյութերի եւ նեկտարների, մուրաբաների եւ բանջարեղենային պահածոների խոշորագույն արտադրողներից եւ արտահանողներից մեկն է: Արտահանման հիմնական շուկաներն են ՌԴ-ն, ԱՄՆ-ն եւ եվրոպական որոշ երկրներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԸ

Երեւան համայնքում տեղական վճարների՝ 2024 թվականի դրույքաչափերի առաջարկվող փոփոխություններով պայմանավորված՝ ավտոկայանատեղիների վճարների դրույքաչափերը սահմանվելու են գոտիավորման սկզբունքով. այս մասին գրել է Երեւանի քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը:

Առաջարկվում է Երեւան քաղաքում սահմանել Ա եւ Բ գոտիներ:

Ա գոտին ներառում է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Ագաթանգեղոս, Խանջյան, Ալեք Մանուկյան, Չարենց, Կորյուն, Աբովյանի պուրակ, Իսահակյան, Մոսկովյան, Սարյան եւ Լեո փողոցների շրջանակը, ընդհանուր՝ շուրջ 40 փողոց եւ պողոտա: Նշված հատվածներում, ըստ առաջարկվող տարբերակի, նախատեսվում է կիրառել հետեւյալ դրույքաչափերը՝

Ա գոտի՝

յուրաքանչյուր 1 ժամվա համար ՝ 300 դրամ,

յուրաքանչյուր 1 օրվա համար՝ 2000 դրամ,

մեկ շաբաթվա համար՝5000 դրամ,

մեկ ամսվա համար՝18000 դրամ,

մեկ տարվա համար՝160 000 դրամ:

Բ գոտի՝

յուրաքանչյուր 1 ժամվա համար ՝ 200 դրամ,

յուրաքանչյուր 1 օրվա համար՝ 1000 դրամ,

մեկ շաբաթվա համար՝2000 դրամ,

մեկ ամսվա համար՝4000 դրամ,

մեկ տարվա համար՝24000 դրամ:

Նախաձեռնության հիմքում առաջնահերթ մայրաքաղաքի Փոքր կենտրոնն էականորեն բեռնաթափելն է, այլ ոչ համայնքային բյուջեի եկամուտներն այսկերպ ավելացնելը: Ընդ որում՝ սա տրանսպորտային բարեփոխումների համատեքստում համայնքի կողմից իրականացվող շարունակական քայլերից մեկն է, որն ունենալու է նաեւ այլ բաղադրիչներ:

Մասնավորապես՝ հաջորդիվ Փոքր կենտրոնում ավելանալու են հասարակական տրանսպորտի համար առանձնացված երթեւեկելի գոտիները: Այլ կերպ ասած՝ առաջարկվող փոփոխությունների ամբողջ տրամաբանությունը հասարակական տրանսպորտի համար առաջնահերթություն սահմանելն է:

ԿԱՅՔԸ ԿՈՏՐԵԼ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար անդրադառնում է ԿԳՄՍ նախարարության կողմից հրատարակած դասագրքերի խնդիրներին: Սկզբում դրանք ունեին քարտեզների հետ կապված խնդիրներ, որտեղ Արցախը Հայաստանի մաս չէր: Այս ամենից հետո «Ժողովուրդ» օրաթերթը անդրադարձել էր մաթեմատիկայի դասագրքերին, որտեղ մաթեմատիկական խնդիրների կողքին գտնվող QR-ները պարունակում են խնդրի լուծումները եւ խնդիրների պատասխանները:

Այս անգամ խնդիրն այլ է: Մի շարք դասագրքերի QR կոդերը տանում են դեպի նպատակակետ, սակայն կայքը թուրքական կողմի թեթեւ ձեռքով կոտրվել է, եւ սկանավորելուց հետո թուրքական դրոշ է հայտնվում:

Տեղեկատվական անվտանգության մասնագետ Սամվել Մարտիրոսյանը իր ֆեյսբուքյան էջում գրել էր. «Քանզի վասնզի ինձ գրում են, ասեմ. մի շարք դասագրքերի վրայի QR կոդերը տանում են դբա սենց (այս պահին արդեն անջատել են թուրքական դրոշը, կայքը պարզապես անջատված է): Հրատարակչությունը , որը տվյալ գրքերն է տպել ու տեղադրել քյուառները, ժամանակավոր կորցրել էր կայքը, որը կոտրել էին թուրքական հաքերները:

Բայց վերջին երկու շաբաթում արդեն երկրորդ անախորժությունն է QR-ների հետ. գալիս ենք պարզ եզրակացության՝ թվային խաղալիքներ ստեղծելուց հարկավոր է տասն անգամ չափել, հետո նոր տպել»:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՊԱՏՄԵՑ

«ՕՊԵՐԱՑԻԱ «ՄԵԾԱՊԱՏԻՎ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ»»-Ն ՈՒ ԼՈՒԻԶԱՆ

Նոյեմբերի 30-ից մեծ էկրաններ կբարձրանա «Օպերացիա «Մեծապատիվ մուրացկաններ»» ֆիլմը, որի նախադիտումը կայացավ նոյեմբերի 26-ին «Մոսկվա» կինոթատրոնում:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ, որպես ֆիլմի գլխավոր դերակատարներ, հանդես են եկել Ռաֆայել Երանոսյանը, Քեն Դավիդյանը, Լուիզա Ներսիսյանը, Վիկտորիա Սահակյանը, Սոս Ջանիբեկյանը, Լեւոն Հախվերդյանը, Արսեն Սաղաթելյանը, Անի Խաչիկյանը, Գրիշա Աղախանյանը եւ այլք:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ֆիլմի գաղափարն ի սկզբանե ծնվել է Արշալույս Հարությունյանի մոտ, իսկ սցենարը գրել է Նարեկ Ավագյանի հետ: Պրոդյուսերն Արման Միտոյանն է:

«Ժողովուրդ» օրաթերթը ֆիլմի մանրամասների, իր մարմնավորած կերպարի եւ բարդությունների մասին զրուցել է դերասանուհի Լուիզա Ներսիսյանի հետ:

-Ումի՞ց եւ ինչպե՞ս ստացաք առաջարկը՝ նկարահանվելու ֆիլմում:

-Քանի որ ֆիլմի ռեժիսորն Արշալույս Հարությունյանն է, ում հետ աշխատում ենք Կամերային թատրոնում, ընթացքում եկավ, ասաց, որ մի շատ հետաքրքիր կերպար կա ոչ պակաս հետաքրքիր ֆիլմում, եւ, իր կարծիքով, ես դա լավագույնս կմարմնավորեմ:

-Երբ առաջին անգամ կերպարի մասին էիք կարդում, միանգամից հասկացա՞ք, որ այն Ձերն է: Ի՞նչ աշխատանք եք տարել: Ես գիտեմ, որ Արշալույս Հարությունյանը սովորաբար մանրակրկիտ աշխատանք է տանում դերասանների եւ իրենց մարմնավորած կերպարների հետ:

-Քանի որ Արշալույսը մինչեւ իմ կարդալն արդեն ասել էր, թե ինչպես է պատկերացնում իմ ու կերպարիս համադրությունը (պետք է նշեմ, որ նա շատ վառ երեւակայություն ունի եւ կարողանում է կերպարը մատուցել այնպես, որ այն հեշտությամբ դառնա քոնը), դրա համար պատկերացնում էի, թե ինչ եմ խաղալու:

-Ի՞նչ կերպար է, ո՞ւմ եք մարմնավորում, ի՞նչ բնավորություն ունի նա:

-Կերպարս հակակշիռ է մյուս՝ «մեծապատիվ մուրացկանին»՝ ի դեմս Ռաֆայել Երանոսյանի: Ֆիլմի անունը «Օպերացիա «Մեծապատիվ մուրացկաններ»» այն «մեծապատիվ մուրացկանների» մասին է, որոնք զգացել են փողի համը, սակայն այդ ստատուսը չունեն:

-Իսկ այս անգամ մենք տեսնելո՞ւ ենք նոր Լուիզայի: Հայկական ֆիլմարտադրության հիմնական խնդիրն այն է, որ մի ֆիլմից մյուսն անցնելիս դերասանները սովորաբար փոփոխության չեն ենթարկվում, եւ մենք կարծես բոլոր ֆիլմերում նույն կերպարը տեսնենք:

-Չի կարելի պահանջել, որ դերասանը ամբողջությամբ իր կաշվից դուրս գա եւ լրիվ այլ տեսակով ներկայանա: Այստեղ շատ կարեւոր է առաջադրված հանգամանքները, եւ թե ինչքանով ես քեզ այդտեղ հարմարավետ զգում եւ հասկանում, թե ով ես դու եւ որ իրավիճակում ինչպես պետք է գործես:

Արտահայտչամիջոցների առումով, բնականաբար, մենք չենք կարող մեր ֆիզիկային ու բնությանը հակառակ գնալ, այդ իսկ պատճառով ես ավելի շատ կենտրոնանում եմ նրա վրա, թե որքանով է ստացվել ինձ մոտ կերպարանափոխվել ուղեղով:

-Անոնսից կարելի է հասկանալ, որ Դուք եւ Քեն Դավիդյանը եւս միասին ունեք տեսարան: Նկարահանումները Քենի հետ ինչպե՞ս էին ընթանում:

-Բարդ էր այն առումով, որ հայերեն տեսարանները մի փոքր դժվար էր տրվում Քենին. ես նույնսիկ ունեմ կադրից դուրս հոլովակներ, որոնցում Արշալույս Հարությունյանը տանջվում է հենց այդ տեսարանների վրա: Նա նախադասություն առ նախադասություն աշխատում էր Քենի հետ, որպեսզի ամեն բան ընթանար իդեալական: Մենք էլ համբերատար սպասում էինք տեսարանի նկարահանվելուն:

Ինչ վերաբերում է պատրաստ տեսարանները խաղալուն, երբ մենք արդեն սկսում էինք նկարահանումները, նա շատ հետաքրքիր էներգետիկա ուներ, որը փոխանցվում էր բոլորիս, հավես էր իր հետ աշխատել: Բազմաթիվ խնդիրներից զատ, Քենը շատ հետաքրքիր աուրա ուներ:

-Ի՞նչ եք կարծում, այս ժանրի ֆիլմը կսիրվի՞ հանրության կողմից: Մեզանում նորություն է «էքշնը» որպես այդպիսին:

-Մի փոքր դժվար է ինձ այս հարցին պատասխանելը: Համենայնդեպս, կարող եմ ասել, որ այն հետաքրքիր լուծումներով ու գույներով, որ ներկայացրել է Արշալույս Հարությունյանը, այլ է ու ուրույն ֆիլմ է լինելու՝ համեմված հումորով եւ, դրա հետ մեկտեղ, իրավիճակների դինամիկ զանգացմամբ եւ հանգուցալուծմամբ:

-Մինչ ֆիլմի նախադիտումը ունեի՞ք լարվածություն, թե՞ տարիների հետ արդեն հղկվել եք:

-Իհարկե, կար լարվածություն: Ամեն անգամ հանդիսատեսի դատին նոր բան հանձնելուց լարվածությունն ու պատասխանատվությունը չափից շատ մեծ է: Դու աշխատել ես եւ դեռ արդյունքը չես տեսել, ըստ այդմ՝ անակնկալներով լի եւ պատասխանատու պահ է դա:

Զրուցեց ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԸ

ՀԻԾՈՒՄ Է

ԳԱՂԹԻ ԾԱՆՐ ՕՐԵՐԻՑ

Շրջափակման ծանր օրերի, գաղթի ճանապարհի ու սպասվող պատերազմի իր կանխատեսումների մասին պատմում է Արցախից բռնի տեղահանված Նորայր Ասրյանը: «Մինչեւ պատերազմի սկսվելը ես արդեն կանխատեսում էի, որ պատերազմ լինելու է, բայց թե երբ եւ ինչպես կավարտվի, պատկերացում անգամ չունեի»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասում է Արցախից բռնի տեղահանված Նորայր Ասրյանը:

«Պայմանագրային զինծառայող էի: Մինչեւ պատերազմի սկսվելը նկատել էի զինտեխնիկայի պարբերաբար կուտակումը թշնամու կողմից: Մենք էլ մեր վերադասին էինք տեղեկացնում, որ բավականին կուտակում կա, սակայն մեզ հաղորդում էին, որ նրանք պատրաստվում են զորավարժության: Երբ մոտեցավ մեր հերթափոխին, որ պիտի արդեն իջնեինք, թույլ չտվեցին՝ ասելով որ «համար 1» դրություն է հայտարարված, պետք է մնանք դիրքերում: Երկու օր մյուս հերթափոխի հետ դիրքում մնալուց հետո հայտարարեցին, որ իջնենք, սակայն տուն հասնելուն պես զանգեցին ու տեղեկացրեցին, որ լարված իավիճակ է, պիտի գնանք դիրքեր: Այդպես մեկ շաբաթ ու դեռ ավել անընդհատ կանչում, դիրքեր էին բարձրացնում եւ իջեցնում»,- պատմում է մեր զրուցակիցը:

Սեպտեմբերի 19-ին կրկին կանչեցին զորամաս, բաժանեցին զենքերը, եւ հանձնարարական ստացան դիրքեր բարձրանալու:

«Այդ օրն արդեն ասացին, որ կռիվ է լինելու, պիտի ամեն ձեւ պատրաստ լինենք: Ամեն տեղից կրակում էին, իսկ մենք չունեինք ո՛չ բավարար զենք, ո՛չ էլ բավարար քանակ կռվելու համար: Եղածով պաշտպանվում էինք: Մեկ օրվա ընթացքում կորցրեցի իմ ընկերներին, ընկանք շրջափակման մեջ: Ինքնուրույն կարողացանք դուրս գալ շրջափակումից, քանի որ տարածքին ծանոթ էինք: Անտառով եկանք, հասանք Ստեփանակերտ: Ճանապարհին դիմավորեց մեծ եղբայրս եւ ասաց, որ գյուղերը չկան էլ, իսկ բնակիչներին տարհանել են: Կինս 5 երեխաներիս եւ երկու եղբայրներիս կանանց ու երեխաների հետ ապաստանել էր Իվանյանի ռուսական ռազմաբազայի մոտ: 4 օր մնացին այնտեղ՝ հույս ունենալով, որ ետ կուղարկեն: Սեպտեմբերի 24-ին հայտարարեցին, որ պիտի դուրս գանք Արցախից»,- պատմում է Նորայր Ասրյանը:

4 օրս մնացին այնտեղ՝ հույս ունենալով, որ ետ կուղարկեն, սակայն սեպտեմբերի 24-ին հայտարարեցին, որ պիտի լքեն Արցախը: Սեպտեմբերի 25-ին Նորայրի ընտանիքը եւս բռնեց գաղթի ճանապարհը:

«Սեպտեմբերի 25-ին սկսվեց մեր ընտանիքի գաղթը, մի ողջ գերդաստան տեղափոխվեց Երեւան 3 ֆորդով: Երկու գիշեր անցկացրինք ճանապարհին սոված ու գրեթե հյուծված վիճակում. ուտելու ոչինչ չկար, իսկ երեխաներն անընդհատ հաց էին ուզում: Միայն իմ մեքենայում 15 երեխա կար: Մի կերպ էինք երեխաներին հանգստացնում, երբ հաց էին ուզում: Երկու օր ճանապարհին գիշերելուց հետո՝ երրորդ օրը, հասանք Գորիս»,- պատմում է մեր զրուցակիցը:

ՍՊՈՐՏԱՅԻՆ

ԿԳԼԽԱՎՈՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ



Իտալական «Ռոմայի» պորտուգալացի գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյոն ցանկանում է աշխատել Բրազիլիայի հավաքականում, որը մտադիր է 2024թ. Ամերիկայի գավաթից առաջ՝ հաջորդ ամռանը, նշանակել նոր գլխավոր մարզչի. հաղորդում է Goal.com-ը:

Մոուրինյոյի պայմանագիրը հռոմեական ակումբի հետ կավարտվի հաջորդ ամռանը: Կողմերը չեն բանակցում համագործակցությունը շարունակելու հարցով:

Անցած ամռանը հայտնի դարձավ, որ Բրազիլիայի հավաքականը նախնական պայմանավորվածություն ունի Մադրիդի «Ռեալի» իտալացի գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտիի հետ, որի պայմանագիրն Արքայական ակումբի հետ եւս կավարտվի 2024թ. հունիսին:

Վերջին օրերին իսպանական եւ բրազիլական լրատվամիջոցները գրեցին, որ Բրազիլիայի ֆուտբոլային կոնֆեդերացիան հրաժարվել է Անչելոտիին հրավիրելու մտադրությունից:

Մոուրինյոյի ծառայություններով հետաքրքրված են նաեւ Սաուդյան Արաբիայի ակումբները:

ՀԱՂԹՈՂԻ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊ

Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնայի» իսպանացի գլխավոր մարզիչ Չավին մեկնաբանել է 2:1 հաշվով կամային հաղթանակը պորտուգալական «Պորտուի» նկատմամբ Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի նախավերջին տուրի տնային խաղում: Այդ հաղթանակի շնորհիվ կատալոնական թիմը երեք տարի անց դարձյալ կխաղա գլխավոր եվրագավաթային մրցաշարի 1/8 եզրափակչում:

«Ուրախ եմ ակումբի համար, քանի որ իսկապես լավ հաղթանակ տարանք առաջնակարգ թիմի նկատմամբ եւ նվաճեցինք փլեյ-օֆֆի ուղեգիր: Մենք դրսեւորեցինք հաղթողի մտածելակերպ եւ հոգեբանություն՝ ճիշտ արձագանքելով 0:1 հաշվին:

Երկրորդ խաղակեսը ցույց տվեց, որ մենք լավ մակարդակի վրա ենք: Ընդմիջմանը տղաներին ասացի, որ պետք է ավելի համարձակ գործեն, դիմեն ճիշտ ռիսկի»,- Չավիի խոսքը մեջբերում է AS-ը:

Հ խմբում «Բարսելոնան» 12 միավորով առաջինն է: Երկրորդ ուղեգրի համար պայքարը վերջին տուրում կշարունակեն 9-ական միավոր վաստակած «Պորտուն» եւ ուկրաինական «Շախտյորը»: Վերջին տուրում «Պորտուն» դեկտեմբերի 13-ին կընդունի «Շախտյորին»:

● *Դեկտեմբերի 1-ին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնում տեղի կունենա «Վեներան մուշտակով» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչ է հաշմանդամություն ունեցող անձի վերականգնողական անհատական ծրագիրը:

Տիրուհի Մնացականյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կ. Մնացականյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ վերականգնողական անհատական ծրագիրը՝ սահմանված որոշակի վավերապայմաններով եւ ձեւով, լրացման համար անհրաժեշտ դաշտեր պարունակող փաստաթուղթ է, որի համաձայն իրականացվում է հաշմանդամություն ունեցող անձի բժշկական, մասնագիտական եւ սոցիալական վերականգնումը:

Վերականգնողական անհատական ծրագիրը (ՎԱԾ) կազմվում է բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի կողմից հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու դեպքում: Վերականգնողական անհատական ծրագրում սահմանվում են վերականգնողական միջոցառումների ծավալները, տեսակները եւ ժամկետները, աջակցող միջոցների եւ այլ ծառայությունների տեսակները:

ՎԱԾ-ն ունի երաշխավորական բնույթ: Հաշմանդամություն ունեցող անձն իրավունք ունի հրաժարվելու վերականգնողական անհատական ծրագրով նախատեսված վերականգնողական միջոցառման տեսակից, ձեւից եւ ծավալից, ինչպես նաեւ ամբողջ ծրագրի իրականացումից:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ հաշմանդամություն եւ սոցիալական այլ կարգավիճակ ունեցող անձանց տրամադրվում են աջակցող միջոցներ, որոնք են՝ պրոթեզներ (վերին եւ ստորին վերջույթի), կրծքագեղձի էկզոպրոթեզ, ակնագնդի պրոթեզ, ձայնաստեղծ սարքեր/պրոթեզներ, օրթեզներ, անվասայլակներ, գուլպաներ (անդամահատված ծայրատի համար), լսողական սարքեր, լսողական սարքերի անհատական ներդիրներ, աղեկապեր, սեղմիրաններ, հենակներ, ձեռնափայտեր, քայլակներ, ծնկակալեր, ռեկլինատորներ, կոշիկներ (օրթոպեդիկ, պրոթեզի, օրթեզի):

ԲԱՆԿԱՅԻՆ

ՀԱՐՑ. Բանկոմատից փորձել եմ կանխիկացնել աշխատավարձս, սակայն պարզել եմ, որ քարտիս ժամկետը արդեն մեկ ամիս է, ինչ լրացել է: Դրա հետեւանքով չեմ կարողացել ժամանակին կանխիկացնել գումարը: Ուզում եմ տեղեկանալ՝ արդյոք բանկը պարտավոր չի ինձ տեղեկացնել քարտի ժամկետը լրանալու մասին:

Լարիսա Հունանյան (52 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ բանկն օրենքով պարտավորություն չի կրում տեղեկացնելու վճարային քարտի ժամկետի լրանալու մասին, քանի որ վավերականության ժամկետը նշված է քարտի վրա:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ հաճախորդն իրավունք ունի իր հաշվում առկա դրամական միջոցները տնօրինել իր հայեցողությամբ՝ բանկին հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու կարգադրություն տալով: Սակայն պայմանագրով նախատեսված դեպքերում բանկն իրավունք ունի հաճախորդի հաշվից անակցեպտ (անառարկելի) կարգով գումարներ գանձել՝ ուղղելով այն հաճախորդի՝ բանկի նկատմամբ ունեցած պարտավորություններին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ուկրաինայի ՆԳՆ ղեկավարը տեղեկացրել է, որ վատ եղանակի պատճառով զոհվել է 12 մարդ, տուժել է 23 մարդ, նրանց թվում՝ 2 երեխա:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______
Ազգանուն՝ ______
Առաքման հասցե՝ ______
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ______

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 3 - 7 / + 2 + 6	
Կոտայքի լեռներ	- 2 - 5 / + 2 + 5	
Կոտայքի նախալեռներ	- 2 - 5 / + 4 + 8	
Գեղարքունիք	- 2 - 6 / + 1 + 6	
Լոռի	- 1 + 4 / +10 + 14	
Տավուշ	+ 1 + 6 / +13 + 16	
Արագածոտնի լեռներ	- 4 - 6 / + 1 + 5	
Արագածոտնի նախալեռներ	- 2 - 7 / + 5 + 8	

Արարատ	- 2 + 1 / + 8 + 10
Արմավիր	0 - 3 / + 8 + 10
Վայոց ձորի լեռներ	0 - 5 / + 1 + 5
Վայոց ձորի նախալեռներ	- 2 + 7 / 0 + 4
Սյունիքի հովիտներ	+ 4 + 8 / +16 + 19
Սյունիքի նախալեռներ	- 2 + 3 / +11 + 15
ԼՂՀ	+ 1 + 6 / + 9 + 12
Երեւան	+ 6 + 8 / + 11 + 13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.11.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*